

Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Բ Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն.

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ. — Զանգեզուր գաւառամասի սահմաններն են. հիւսիսից՝ Զիվանշիրի գաւառը, Մուխտոքեան, Գելլիխ, Չիլգեազ, Ալաղայա լեռներով. արևելքից՝ Զուշու գաւառը, Ղըրխ-ղըզ (40 աղջիկ) լեռնաշղթայով, Սարի-բաբա, Քիրս, և Զիարատ լեռներով. հարաւից՝ Մեղրիի ոստիկանական շրջանը, Քիւչուկ չայով և Գիւմբէզ լեռով. արևմուտքից՝ Սիսիանու ոստ. շրջանը, Քարահունջի և Զնհերի ձորերով, Ալա-գեօլ լճով և խմայդատ գաղաթով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ. Զանգեզուրի գաւարը ներկայացնում է Նախիջևանի և Ղարաբաղի լեռնաշղթաների մէջ ընկած մի հովիտ, որի բարձրութիւնը հասնում է 3,950 ֆ. (1,200 մետրի) և որը, Սեւանի պէս, մի ժամանակ լիճ է եղել, որ Բարկուշատ և Հաքարի գետերի միջոցով դատարկուել է: Այս ջրամբարի կենդրոնում բարձրանում է Իշղլու կամ Քաչալ-դաղ կոնաձև լեռը, որ հասնում է 11695 ոտնաչափ բարձրութեան. շրջակայ հրաբուխներից ժայթքած և նախկին լճի յատակին մի քանի հարիւր ֆուտ բարձրութեան շերտերով նստած մոխիրը և խանձողները գետերի միջոցով տարուելով խոր ձորեր են յառաջացրել: Չեչաքարի դարատափերը (տերրաս), որ ծածկուած են հացահատիկների արտերով՝ ցցւում են կանաչ հովիտների մէջ մոխրագոյն, կանաչ, կապոյտ և մինչև անգամ ալկարմիր քարաժայռերով, որոնց անձրևը շաքարի գլխի և կոթողների ձև է տուել. սրանք տեղ-տեղ կազմում են քարախառն հողակոյտեր, որոնցից մի քանիսը կրում են իրենց ծայրերին վէմի խոշոր կտորներ. սրանք նոյնպիսի «գլխածածք սիւներ»-են, որպիսիները պատահում են և Զվէյցարիայում: Տեղացիները օգտւում են դրանցից, շինելով դրանց մէջ իրենց


մառանները, գոմերը և մինչև անգամ բնակարանները ¹⁾։

ԼԵՌՆԵՐ. Զանգեզուրը սաստիկ լեռնոտ է։ Բազմաթիւ, մեծ և փոքր լեռներ զանազան ուղղութիւններով միմեանց կտրատում և լաւաջացնում են մեծ ու փոքր ձորեր ու հովիտներ, որոնց միջով հոսում են վտակներ ու գետակներ։

Ամենամեծ գագաթը Իշղլուն է, որ բարձրանում է գաւառի արեւմտեան սահմանում։ Սա մի լերկ լեռ է, բաղկացած երկու բարձր գագաթներից, որոնցից մեծը հասնում է 11625 ոտ. բարձրութեան։ Սրա մօտ գտնւում է Թարփանմազ (Фармапъ, այսինքն չշարժուող, վրայի ձիւնը չհալուող) գագաթը, և փոքր ինչ հիւսիս՝ Զան-Ղուրչարան (9219, կեանք-ազատող այսինքն աւազակներից հալածուելիս եթէ այդ լեռը հասնին՝ կեանքերը կազատուի)։ Իշղլուց հարաւ ձգւում են Ուչ-Թափալարի լեռները, որ միմեանցից բաւականաչափ հեռու և բոլորովին առանձին կանգնած երեք գագաթներ են։ Սրանց մօտ գտնւում են նաև Եան-Թափա (7519), Տաշ-Թափա, Զիշ-Թափա (7327) և Ուլու-Թափա (6698) գագաթները։ Հարաւային սահմանին մօտիկ գտնուող լեռներն են Ղուրբան-Թափա, մինը Մաղանջուղի մօտ (4557), միւսը՝ Մազմաղակ (3353) լեռան մօտ (3340), Ամրղըղ-դաղ (4131), Բաշարէտ (4547)։ Արեւելեան կողմում՝ Տէյդաղ լեռնաշղթան, Ելլիջա (7066), Սաղսաղան (7083), Սարի-բաբա (7574), Ֆինգեահ (7903), Զիլեաղ, Դալի-դաղ, Սարի եօխուշ, Ղըրխ-ղըղ լեռնաշղթան (9324), Ղըդ-դարս գագաթով, Դալիկ-տաշ, Դիւրու-տաղ (6916), և Ալաղայա (7672), հիւսիսային կողմում՝ Զիլիկլի, Զիլգեաս (7777) Գելլիխ, Միխտուքեան լեռնաշղթան, (11651), Դալի-դաղ (11907), և Գեալին-դայա (11002)։

Ներքին լեռներից նշանաւոր են, հիւսիսից դէպի հարաւ՝ Քեշիշ Թափա (7560), Զուդալար, Քեադիր-դաշ (10492), Լիւլապար, Ղապան-կեաղըղ (7016), Ղուրեան բաբա (6124), Արտաշաւի, (4456), Վէակիլ (6006), Պիրջան (4594), Զիրախի բաշի (6099), Էկանատ Թափասի (6364), Եաղր Թափա

¹⁾ Реклю: Земля и люди. 4. VI. Եր. 185.



ԿՈՐԷՍ ԱՒԱՆ

(6298), Տեղ (5180), Ղըղըլ-բողաս-դարի (11059), Հոչաս (6342), Լաչին (6328), Եալգուդ-դաղ (5410), Ջամէն-գէօմ (5294), Դատ-մելիք (6761), Բիգովչի-դարի (5448), (Ղարա-դեօլի մօտ), Քեչալ-դաղ (10648), Չալբրուն (6287), Ղաղի գիւլան բաշի (7450), Ղամիւր-թափա (4449), Տօրխան-եալի (4490), Պաշ-քենտ եալ (6824), Մազմազակ (3843), Բէզմին դաղ (3656), Քարահունջ-թափա (5535):

ԼՃԵՐ.—Ջանգեգուրում մեծ լճեր չկան, բոլորն էլ փոքրիկ լճակներ են, լեռներում գոյացած գոգաւորութիւնների մէջ: Ամենամեծ լճակը Ղարա-դեօլն է, որ գտնւում է Իշղլի, Բիգովչի-դարի և Քեչալ դաղ գագաթների ընդհարման կենտրոնում, 8930 ոտ. բարձրութեան վրայ:

Սրա մօտ գտնւում է Ղալնի-դեօլ փոքրիկ լճակը:

Ղարա-դեօլից դէպի արևելք, Չալբրուն լեռան մօտ, գրտնւում է Ղաղի-դեօլ փոքրիկ լճակը, ամբողջովին ծածկուած եղէգով: Ամառը ջուրը սաստիկ նուազում է և երբեմն էլ բոլորովին չորանում:

Արևմտեան սահմանին մօտ գտնւում են Օլօուլեար, Ալա-դեօլեար և Ղարա-դեօլ փոքրիկ լճակները, իսկ հիւսիսային կողմում Չիֆտլիկ լճակը:

Հարաւային կողմումն էլ, Ուչթ-փալարի մօտ՝ Ջնհեր-դեօլ և Ուչթափա-դեօլ լճակները:

Այս բոլոր լճերը գոյանում են գարնան հալուող ձիւներից և ամառը եթէ ոչ բոլորովին չորանում՝ գոնէ սաստիկ փոքրանում են:

ԳԵՏԵՐ.—Ջանգեգուրի ամենանշանաւոր գետը Հաքարու—գետն է, որ սկիզբն է առնում Գելլըղ սարերից: Նրա մէջ թափւում են — աջ կողմից՝ 1) Ջալվա-վտակը, որ բղխում է Գելլըղ լեռից, 2) Հոչասը, որ սկիզբն առնելով Միխտուքեան լեռնաշղթայից՝ ընդունում է իւր մէջ Իղըրըմ-սու վտակը, 3) Աղ-օղլան կամ Ծիծեռնավանքի-ջուրը, որ սկիզբն է առնում Իկանատ-թափասուց և ընդունում է Մինքենտ-չայը, Ղարասուն, Մերիկ, Խընածախի-չայ վտակները: Աղ-օղլանը Զաբուխ

Թրքաբնակ գիւղի մօտ վերակոչւում է Զաբուխ-գետ և այստեղ թափւում է Հաքարուի մէջ:

Չախ կողմից — 1) Ալակչին, որ սկիզբն է առնում Չիչի-կլի լեռից, միանում է Չիլգեաս լեռից բղխող Կաբէրի-չայի հետ և ապա միանալով Ղըրխ-ղըղ լեռնաշղթայից բղխող վտակների հետ, թափւում է Հաքարուի մէջ: 2), Եաղլի-դարա վտակը, որ սկիզբն է առնում Սաղսաղանի մօտերքից, հոսում է Եաղլի դարա անտառապատ ձորակի միջով և Տատարասի մօտ թափւում է Հաքարուի մէջ: Եաղլի-դարա անունը ծագում է այն հանգամանքից, որ այս ձորակն ամենալաւ արօտներ ունենալով՝ առատ է իւղով: 3), Միլխալեմ, որ բղխում է Քիրսից, միանում է Սաղսաղանից բղխող Զոռ-սուի հետ և Մելիկնոեասի գիւղից բաւական հարաւ թափւում Հաքարուի մէջ:

Հաքարու գետը հոսելով շարունակ գէպի արևելահիւսիս՝ անցնում է ամբողջ Զանգեզուրի ոստիկանական շրջանով և ապա միանում Բաղար-չայի հետ և գնում թափւում Արաքսը:

Հաքարուի, ինչպէս և Բարկուշատի մէջ պատահում են բաւական մեծ օրագուլներ և ջրշուններ (ВЫДРА).

Միւս գետերից նշանաւոր են. Գերուսի-չայը, որ սկիզբն է առնում Ուչ-Թափալար լեռնաշղթայից: Այստեղ երեք լեռներ միմեանց ընդհարուելով՝ մի փոքրիկ ձորակ են ձևացնում, որտեղից բղխում է մի սառն, վարար աղբիւր, որ կոչւում է Վարարակ. սրան խառնւում է Զոռ-ջուր վտակը, որ անցնում է Չաղեձորի միջով: Ապա Քարահունջի մօտ Գորիսի գետին միանում է Զաքարու գետը, որ սկիզբն է առնում Ուչ-Թափալարի աղբիւրներից և անցնում համանուն ձորով: Հոսելով մինչև Գաուդլու գիւղի մօտերքը, Գորիսի գետը թափւում է Բաղարչայ գետը: Այս գետի հովիտը ամբողջովին ծածկուած է այգիներով, ուր բուսնում են բացի խաղողի որթից, նաև թթենի, կեռասենի, խնձորենի և այլն:

ՋՐՎԷՓ. — Զանգեզուրում կայ միայն մի ջրվէժ, որ գրտնւում է Քարահունջ գիւղի հիւսիսային կողմում, բարձր ժայռերի ծերպին: Առուակը սկիզբն է առնում Ուչ-Թափալարի ստորոտի Եօթն-աղբիւր ու Քէօյ-բուլախ աղբիւրներից և մօտ 16

աաժէն բարձրութիւնից վայր գլորուելով՝ գեղեցիկ տեսարան
ընծայում: Փողովուրդը ջրվէժի հանած ձայնը ՚ի նկատի ու-
նենալով՝ ձուռան է կոչում նրան:



Ջրվէժ Քարահունջում.—ձուռան.

ՀԱՆՔԵՐ.—Ջանգեղուրի ոստիկանական բաժնում չկան մը-
շակուող հանքեր, սակայն տեղ-տեղ երևացել և երևում են
հանքեր, որոնք թերևս մի ժամանակ ուշադրութեան առնուին
և շահագործուին: Սրանցից նշանաւոր են.

1) Քարահունջ գիւղում երկաթի և կաւիճի հանքերը:

2) Գառաշրուում պղնձի հանքը, որ, ինչպէս երևում է՝ հին ժամանակները մշակուելիս է եղել:

3) Խնձորեսկում աղի և պղնձի հանքեր:

4) Հաճի Սամլիում հանքային ձիւթի (ГОРНЫЙ ВОСКЪ) աղբեստ (Asbeste) և պղնձի հանքեր:

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ.—Հանքային ջրերով բաւական հարուստ է Զանգեզուրի շրջանը, սակայն ոչ մինն էլ կանոնաւոր կերպով չէ շահագործւում:

Այս ջրերից նշանաւոր են սելտերեան ջրերը, որ գտնւում են 1) Գորիսից փոքր ինչ արևելահիւսիս, 2) Զաղեձորում, 2) Քարաշէն գիւղի մօտ, 3) Հերիկ գիւղում, 4) Բայենդուր գիւղում, 5) Մենքենդի մօտ, տաք ջրից փոքր ինչ բարձր:

Ծմբային տաք ջրի երկու աւաղան կայ Մինքենտի մօտ, Հերիկի և Մինքենդի ճանապարհի զրեթէ կէսին. մինն էլ կայ Քարահունջում:

ԿԼԻՄԱՆ.—Գաւառումս օդերևութաբանական կայարան չլինելով՝ կլիմայի վերաբերութեամբ պակասում են հաստատ տեղեկութիւններ: Այն միայն յայտնի է, որ ընդհանրապէս կլիման առողջարար է և փոփոխւում է՝ նայելով տեղի բարձրութեան. մինչդեռ բարձրաւանդակների վրայ ցուրտ է՝ հաքալի և Բարկուշատի հովիտներում սաստիկ տաք է: Բարձրաւանդակների վրայ ձմեռը տևում է ամբողջ 6 ամիս և թէպէտ շատ խիստ չէ, բայց սաստիկ ձիւն է գալիս և յաճախ բուք բարձրանում: Ուշ-թափալարի բարձրաւանդակում անպէս խիստ են լինում այս բուքերը, որ Գորիսի և Սիսիանի մէջ հաղորդակցութիւնն ընդհատւում է մի քանի ամսով: Գեռ հին ժամանակներից այս տեղերում բարձր քարեր են ցցուած և մի մեծ ծառ թողած ճանապարհի կողքին՝ որպէսզի բքից բռնուած ուղևորը կարողանայ ճանապարհը գտնել, սակայն և այնպէս՝ զրեթէ ամէն տարի պատահում են զոհեր: Փարունը և աշունը անձրևային են, ամպամած և թխապապտ օրերով: Յաճախ տեղացող անձրևները թէև նպաստում են բուսականութեան աճման, սակայն ցորենի վրայ վատ ազդեցութիւն են անում, որովհետև աճեցնում են ցօղունը և թոյլ չեն տալիս լաւ հասկ

քունելու: Օդի խոնաւութիւնից բնակիչների մէջ շատ տարածուած է ոսկրացաւը: Մի քանի տեղեր ճահճային լինելով՝ տարածուած է մալարիա հիւանդութիւնը:

Հաքարի և Բարկուշատի հովիտներում կլիման տաք է, և ամառը այնպէս տոթ է լինում, որ շունչ քաշել անգամ չէ կարելի ¹⁾:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—Այս գաւառամասի առաւելապէս Հաջիսամլուի կողմը ծածկուած է խիտ անտառով, ուր գրտնւում են գլխաւորապէս՝ կաղնի, բոխի (*Carpinus Betulus*). Հաճարկի (*Fagus silvaticus*, букъ). հացիկի (ясень), դարադաճ (*Ulmus campestris*). ցրտնի (*Juniperus*, можжевельникъ), սղնի (боярышникъ), նարնջափայտ (*Rhus cotinus*) և այլն: Պտղատու ծառերից, թէ՛ անտառներում և թէ՛ այգիներում, գտնւում են—խնձորենի, տանձենի, սալորենի, կեռասենի, թթենի և այլն:

Դալարաբոյսերից նշանաւոր են՝ պոխի (*prangos*), ղեղ-ճաճաղիկ (*genista tinctoria*), ուրց (*thunus*), վայրի անխոն և այլն, ինչպէս և գետնամոռի և ելակ:

Արտերում ցանում են՝ դանազան տեսակի ցորեն, գարի, հաճար:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ.—Ընտանի կենդանիներից առաւելապէս պահում են՝ ոչխար, այծ, կով, էշ, ջորի, ձի: Վայրենի կենդանիներից անտառներում և դաշտերում գտնւում են՝ նապաստակ, եղնիկ, այծեամ, աղուէս, գալլ և երբեմն արջ:

ԹՈՂՈՒՆՆԵՐ.—Ընտանի թռչուններից պահում են գրլխաւորապէս՝ հաւ, տեղ տեղ էլ՝ հնդկահաւ, սագ և բադ. վայրի թռչուններից գտնւում են՝ աղաւնի, կաքաւ, տատրակ, փասիան, կտցահար, լոր, սև մշահաւ (*Turdus merula*), բազէ, բուէճ (филинъ), շահէն, արծիւ և այլն:

¹⁾ Օգտուել եմ՝ պ. Զելինսկու լիշեալ աշխատութիւնից, Գեդեվանովի „Зангезурский уездъ... въ медицинскомъ отношеніи“ հետազոտութիւնից և Լէօի՝ „Իմ չիշատակարանը“ ճանապարհորդութիւնից: